

Ա.ՇԱՀԵՆ

ՅԵՐԵՔ

# ՊԱՏՄՎԱԾՔ



891.99Մ  
Ը-17

ՊԵՏՐԱՏ  
1939

2011-07

30 MAY 2011

881.9915  
Չ-17  
ԱՐ

Ա. ՇԱՀԵՆ



# ՅԵՐԵՔ ԴԱՏԱՎԱԾՔ

ՆԿԱՐՆԵՐԸ  
ՍՏ. ԱԼԹՈՒՆՅԱՆԻ

ՊԵՏՏՐԱՏ  
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՄԱՏԱՆՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
1939

ԾՈՒՅԼ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ

1

Շատ հին ժամանակ մի գյուղում ապրում էին  
 յերկու յեղբայր: Իրանցից մեկը Ովեսն էր, մյուսը՝  
 Փարանը: Քանի կենդանի յեր նրանց հարուստ հայրը,  
 յեղբայրներն ապրում էին լիության մեջ, հանգիստ  
 ու ապահով և չգիտեին, թե ինչ բան է աշխատանքը:  
 Բայց յերբ մեռավ հայրը, յեղած ապրուստը քա-  
 մուն տվին և ապրելը դժվարացավ: Նրանք ամեն  
 որ ծեծում էին իրար և ամեն մեկն իր մեղքը  
 գցում էր մյուսի վրա: Ենքան սովորական էր դար-  
 ձել յեղբայրների կռիվը, վոր հարևաններն այլևս  
 չէին բաժանում նրանց և հեռվում կանգնած ծի-  
 ծայում էին: Իսկ յեթե պատահեր, վոր յերկու հա-  
 րևան կովեյին իրար հետ, մեկը մյուսին կասեր.

— Դե, լեզուդ քեզ քաշիր... Ովեսը չգառար  
 գլխիս:

— Իսկ դու,—ասում էր մյուսը,—Փարանն էս,  
 վոր կաս...

Ովեսը Փարանից մի քանի տարով մեծ էր:  
 Յերբ տանը կռիվ էր լինում, յեղբայրների մայրը  
 մեծ աղի կողմն էր բռնում և նախատում էր Փարա-  
 նին: Եղ բանը Փարանին դուր չէր գալիս:

— Չե, ա մեր, դու մեզ մի աչքով չես նայում...  
 հացի շատն ու փափուկը Ովեսին էս տալիս...

Մի որ էլ Փարանը կանգսեց թե՛



2446  
 39

- Սրանից զենք փողը յես պիտի պահեմ...
- Մեծը յէս եմ, թե՛ դու,—ասաց Ովեսը,
- Մեծը դու յես, քո ուտողն ել շատ ե, ինձ ինչ...

Մայրը փորձեց յեղբայրներին հաշտեցնի — բան դուրս չեկավ։ Ովեսն ու Գարանն իրար ծեծեցին, արյունը վա արին։

— Կտամ կսպանեմ, Ովես,—ասում եր Գարանը։

— Տո հլա ես լազլագին մտիկ, ե... Վիզը ասես տանձի կոթ լինի, իսկ լեզուն վոնց ա բլբլում...

Հետո փոշոտված շորերը թափ տալով՝ նրանք նորից հաշտվում եյին իրար հետ, խոսում տան գործերից և թվում եր, թե միշտ ապրելիս են յեղել եղպես հաշտ ու խաղաղ...

2

Յեղբայրներն ունեյին մի եշ, մի կով և մի որավար արտ։ Քանի արտը ձյունի տակ եր, նրանք կարծում եյին, թե ամառը շատ ե հեռու և սուս եյին կացել։ Տանը պարապ նստած՝ կամ կովի եյին անում, կամ թե չե՛ խոսում եյին Բագու գնալու մասին։

Ամենից շատ Ովեսն եր խոսում։

— Գարան, գնանք նավթի բուրուղներում փող աշխատենք,— ծոծրակը քորելով ասում եր Ովեսը։

— Ի՞նչ...

— Ասում եմ գնանք Բագու փող աշխատենք։

— Ի՛նչ, դու ել բան ասացիր... Խելքի տոպրակ, ես բուք—բորանին տանից դուրս գալ կլինի՞... Կսանք, կեթանք...

Անցնում եյին որերը մեկը-մյուսի յետևից։ Ովեսն ու Գարանը քնում եյին մինչև ճաշ և հենց

տեղներից վեր եյին կենում թե չե՛ մի գլուխ Բագու գնալու մասին ելին խոսում։

Մինչև նրանք Բագու կգնային, գարունը յեկավ։ Հանգը լավ կանաչեց։ Յերեկը գյուղում ել մարդ չեր մնում։ Բոլորը գնում եյին արտերը քաղհանելու, այգիներում աշխատելու, դես ու դեն։

Տեսնելով, վոր Գարանը տեղից չի շարժվում, Ովեսը մի որ եշը նստեց և հանդ դուրս յեկավ։ Արտը կանաչել եր, փրփրել։

— Բախտը իրա փոտով ե գալի, հա՛ն։ Յեթե յերաշտ չլինի, ամբողջ տարին լավաշ կուտենք։ Ել ընչի՞ս ա պետք տանից դուրս գամ... Մեռնել կա, ապրել ել կա...

Եսպես եր մտածում Ովեսը, յերբ մի ուրիշ միտք, չգիտես վորտեղից, դուրս յեկավ և նրան պաշարեց։

— Բա ես վոր փրփրելի ա, ո՞վ ա հնձելու...

Շատ մտածեց Ովեսը։ Եշը արածելով նրան տարավ տուն հասցրեց։ Նա եղտեղ միայն գլխի ընկավ, վոր տան բակում վոնց վոր եշը նստել, ենպես ել յես եր յեկել և գլուխն որորելով ձեն տվեց։

— Արտ եմ ասում, հա՛ն, Գարան։ Պահ, պահ, պահ...

Հնձելով չի պրծնելու։ Ել Բագու չեմ գնա, պրծնի...

— Բա պարտքերը, խելքի տոպրակ,— ճակոտալով ասաց Գարանը և պառկած տեղում շուռ յեկավ մյուս կողքի վրա։

— Հլա մի գնա արտը տես, հետո ասի... Պարտքը լինի ա վոր... Հազար մանեթ ել լինի, կտամ...

— Ովես, հավատալս չի գալիս։


— Ախպերու թյունը վկա, տղամարդու խոսք եմ ասում։

Եզ որվանից տան հարսներն ամեն որ գնում էյին արտը քաղհանելու: Շուտով հունձը պիտի սկըսվեր: Կալն ու մարագը պատրաստել էր պետք: Արի ու տես, վոր Ովեսն ու Գարանը տեղները պինդ էյին նստել: Պատի տակ պառկում էյին արեկող, շուռ ու մուռ գալիս և ճանճերը նստում էյին նրանց քիթ ու բերանին:

— Փրփրել ա, վճնց ա փրփրել, հլա մի տեսնես, — աչքերը ճպճպացնելով ասում էր Ովեսը:

— Ե, թող փրփրի, իմ ուտողն ո՞վ ա, — հորանջելով պատասխանում էր Գարանը:

Գարանի վերջին խոսքերը դիպչում էյին Ովեսի սրտին: Կարող ա մտածում էր նա — վոր Գարանը ճիպտոր կամին թողսի, հնձի չգա. են վախտը յես



հալից կրնկնեմ... Իսկ մայրը հա բարկանում էր տղաների վրա.

— Եզ վոր յերկու ախպերով շնթոնել եք, կալն ու մարագն ո՞վ ա պատրաստելու:

Մոր խոսքերի վրա Ովեսն ու Գարանը աչքի տակով իրար էյին նայում, միսչև վոր մեկը սրտապընդվելով լեզվին էր տալիս.

— Դե, այ մեր, կանենք, ելի... Հեչ մի վոագի, հրես սարի պես կանգնած ենք...

— Հա, բն, կանենք, բա չե՞նք անի... Ժամանակը գեռ ո՞ւր ա... — ավելացնում էր Գարանը:

Շուտով հունձն սկսվեց: Մեզվի փեթակի պես գյուղը դժժաց: Առավոտը մութ-մութին, մեծ թե փոքր հանդ էյին գնում: Դե եզ վախտին տանը ո՞վ կնստեր: Միայն Ովեսն ու Գարանն էյին գյուղում մնացել: Նրանք ասես մի բանի էյին սպասում, բայց թե ինչ բանի, հայտնի չեր... Մայրը վիզը ծռած կանգնում էր նրանց կողքին, խնդրում, աղաչում — բան չեր դուրս գալիս: Հենց վոր արտը հնձելու մասին մեկը խոսք էր բաց անում, Գարանի սիրտը դող էր ընկնում: Մի որ ել նա ծանր տեղաց...

— Ովես...

— Հը:

— Յես, ասես թե տկար եմ, մրսած չլինե՞մ...

— Տո հայվան, մտքինդ ի՞նչ ա... Ես կրակին ել մարդ մրսի, քեզ մահանա ա պետք...

Բայց Գարանը կողքի ընկավ: Շորերը հանեց ու մեկնվեց թախտի վրա:

— Ովես, — մեզարի տակից ծորտալով ասաց նա, — դու գնա արտը հնձի մինչև լավանամ... Վայ, մեռա...

— Գարան, դու գնա...

— Ովես, դու գնա...

Յեվ ելի նորից էր սկսվում տուրուղմփոցը:

Գարանն ենքան բոյով էր Ովեսից, վոր առանց մեջքից ծռելու, խփում էր յեղբոր ճաղատ գլխին, ուսերին, իսկ Ովեսը կուչ էր գալիս վոզնու պես, դես ու դեն ընկնում և մեկ-մեկ տեղից ծառս լինելով քացով էր տալիս:

Դրանից հետո նրանք առաջվանից էլ ամուր

եյին նստում տանը, իսկ հասած արտը կծղում էր հանդում:

3

Ամբողջ մի շաբաթ Ովեսն ու Գարանն իրար հետ չխոսեցին: Առավոտը կանուշ գուրա եյին գալիս տնից, գնում եյին այգիներում թուփ ուտում, յողանում, պառկում ծառերի տակ և իլ իկունը մոթին տուն գալիս: Մեկ-մեկու վոչինչ չեյին ասում:

Իայց մի որ Գարանն Ովեսի առաջը կտրեց, թե պետք է բաժանվենք:

— Քո ուտողը շատ ա, ի՞նձ ինչ... Քեզ հետ չեմ ապրում...

Ովեսը շվարեց: Նա չորս յերեխա ուներ, Գարանը՝ մեկ: Արտն ել հնձելու յեր մնացել: Գո՛վար էր:

— Իե վոր եղպես ե,—ասաց Ովեսը,—եչն ել ե իմս, կովն եր Ուր ուզում ես, գնա:

— Ախպերու թյան մեջ հավասար պիտի բաժանենք... Որենքն եսպես ա...

— Եղպիս չի:

— Եղպես ա:

Կանչեցին մի ծեր մարդու: Նա նայեց տան քունջ ու պուճախին, տեսավ բաժանելու բան չկա, թողեց-գնաց: Մնաց ելի նույն շուրը, նույն ջրաղացը:

Մի որ ել, արևի տաք ժամանակ Ովեսն ու Գարանը իրարից քիչ հեռու պառկած եյին: Ովեսը մրթմրթում էր քթի տակ, իսկ Գարանը ձեն չեր հանում: Յերբ մայրը մոտեցավ Ովեսին, նա կուչ յեկավ մեզարի տակ, տապ արեց:

— Ովես:

— Հը, հ'ը, հրես վեր կացա...

— Արտը հանդումը մնաց, փչանաք դուք:

— Հեչ դարդ մի անի, այ մեր, կապրենք...

Սարի պես տղերք ենք, հո սովամահ չենք լինի...

Մայրը կամաց Գարանին էր մոտենում:

— Գարան:

— Հը, եխ հեհեյ,—հորանջում էր Գարանը և մեզարի տակից դուրս պրծած վոտները քաշում, վոր մերր չխփի: Մերը մեզարը դեն էր շպրտում, խփում վոտքով և անիծում:

— Մեռնես, տեղդ դատարկ մնա... Քեզ նման տղան լավ է չունենամ...

Գարանը շապկանց վեր էր թռչում տեղից և տան պուճախում կանգնում:

— Եղ ել քո դատարկ տեղը, պրծանք...

Վերջապես նրանք մի որ արտը գնացին: Ճանապարհին փոխեփոխ նստում եյին եշը և քաղցր գրուլց անում: Յերբ տեղ հասան, Գարանը վիզը յերկարեց ջայլամի պես և նայեց արտի սահմանին, վոր կոչում էր հեռվում: Ովեսն ել կանգնեց եշի փալանի վրա, նայեց: Արտն ենքան էր հասել, վոր խշխշում էր արևի տակ և հասկերը թափվում եյին:

— Գարան, սկսենք,— եշից իջնելով ասաց Ովեսը և քանի միտքը չեր փոխել, մանգաղը վերցրեց:

— Բա հաց չուտենք...

— Տո շլիկ, ի՞նչ արինք, վոր հաց ուտենք...

Մի քիչ հնձենք, հետո կուտենք:

Նրանք վախվխելով մոտեցան արտին: Մի քանի խուրձ հնձեցին: Գարանը շուտ հոգնեց: Քրտինքը կաթում էր նրա կզակից: Հնձելիս նրանք աչքի

տակով նայում եյին իրար, վոր մեկն ու մեկը գլուխ չպահի: Մեկ եւ, ինչպես յեղով, առեի են տաք ժամանակ Գարանը վտաքերը քաշ տալով, մտտեցավ Ովեսին և նրանք իրար կողքի նստեցին:

— Ասում եմ՝ ի՞նչ լիներ ես տաք կրակին, Ովես...

— Թանով բրդոջ:

— Չե, չիմացար:

— Բա ի՞նչ լիներ, զրանից լավ ի՞նչ կա աշխարհում...



— Բա գետը... Ասում եմ ջրաղացի ձորի են զլզլան գետը մեր արտի կողքով անցնելիս լիներ... Մի քիչ հնձես և հենց վոր արևը նեղի, շորերդ հանես՝ չրո՞մփ, ընկնես սառը ջուրը: Ա՛յ թե լավ կլիներ հա՛...

— Յես ել գիտեմ՝ լավ կլիներ, վոր չկա...

Հետո նրանք սուս կացան: Հենց վոր Ովեսը տեղից շարժվում եր, Գարանը վախենում եր, թե հիմի պիտի ասի՝ վեր կաց արտը հնձենք... Նրա միտքն արտի գ շատ հեռու յեր թռչում և մեկը մյուսի յետեվից հարցեր եր տալիս:

— Ովես, եզ ինչի՞ց ա, վոր հասած արտերի կողքով գետ չի անցնում...

— Յեսիմ...— վիզը քորելով պատասխանում եր Ովեսը նայելով արևի տակ խշխշացող հասկերին:

Գարանը գիտեր, թե ինչի մասին ե մտածում Ովեսը և նրա մտքի թելը կտրում եր:

— Հիմա բաղերում թուլթը ծլլում ա, հա՛ա...

Որվա վերջին Գարանն ու Ովեսը նստում եյին արտի յեզրին հնձած խուրձերը համրում: Հունձն առաջ չեր գնում: Փալանը վորն ընկած եջը հեռվից տխուր նայում եր նրանց: Հնձից տուն զարձողները ծաղրում եյին յեղբայրներին:

— Ա՛:Ֆերիմ տղերք, ձեզ նման հնձվորներ Ղարաղաղում ել չես ճարի...

Ես խոսքերը լսելիս Ովեսը խեթ-խեթ նայում եր Գարանին և վրա պրծնում:

— Քեզ վրա յեն ծիծաղում, փո՛ւչ...

— Չե մի... եզ քեզ ո՞վ ասեց, վոր ինձ վրա



յեն ծիծաղում... Հնձիր, ելի, իմ ուսողն ո՞վ ա...

Հենց վոր հնձվորներն անցնում եյին՝ նրանք խկույն մոռանում եյին պատահածը, քեֆները տեղն եր գալիս: Արևն ել չեր վառում: Իրիկվա զլզլան

քամին խաղում եր հասած հասկերի հետ: Գարանն ու Ովեսը հացի եյին նստում և առաջկտրուկ անելով այնպես եյին ուտում, ասես իրենց որում հացի յերես չեյին տեսել: Գարանն առանց ծամելու կուլ եր տալիս հացի մեծ պատանները, նրա կոկորդը սեղմվում եր և աչքերից արցունք եր գալիս:

— Գարան:

— Հը:

— Տո զահրումար, կամաց կեր, հո ձեռիցդ չեն խլում:

Գարանն աչքերը սրբելով դռնում եր Ովեսին.

— Ովես, յես յերեք լավաշով մի ձու կուտեմ:

— Չե մի, գկեռ... Դու ձուն սաղ-սաղ ես կուլ տալի, ուր մնաց յերեք լավաշով ուտես...

— Կուտեմ:

— Ի՞նչպես կուտես:

— Ա՛յ, ասեմ: Վոր լսեմ, թե նանն ինձ համար ձու յե փում, մի լավաշ ուրախությունից կուտեմ:

— Եդ մեկը, հետո:

— Հետո ձուն կշարդեմ լավաշի վրա և մի լավաշով կուտեմ:

— Քո տունը չքանդվի Գարան, մնաց մի լավաշ...

— Դե եդ մի լավաշն ել ձվոտ կլինի, ենպես կուտեմ, ելի...

— Հա, եդ խելք կտրելու բան ա, բայց ենքան ել դժվար չի,—ասաց Ովեսը և տեղն ուղղեց: Այ, յես մի անգամ ենքան գինի խմեցի, վոր քիչ մնաց տրաքվեմ:

— Եդ յերբ եր:

— Աշնանը, խաղողի լավ վախտը: Գնացի մտա մեր հարևանի բաղի հնձանը: Մաճառը կարասնե-

րում պճպճում եր, վոնց եր պճպճում: Ասեցի մի լավ խմեմ, մեռնել կա ապրել ել կա... Նայեցի դես, նայեցի դեն, իմ բախտից մարդ չկար: Գլուխս կախ արի կարասի մեջ, խմեցի, խմեցի, ենքան խմեցի, վոր յերբ գլուխս հանեցի կարասից, հնձանն աչքերիս շուռ եր գալիս ջրաղացի քարի պես: Եդ որը տուն չեկա, հեսց եդտեղ ել պառկեցի հնձանում ու քնեցի... Գարան, յես իմ արևը, վորս ենքան եր ուռել, վոր յերեսիս վրա պառկած գլուխս ու վոտքերս գետնին չեյին դիպչում... Այ, դրան կասեն խմել...

— Փուչ, ինչի՞ ինձ ել չես ասել... Հիմա վոր գընամ բաղի տիրոջն ասեմ, վոնց ես...

— Չե, Գարան, ախպերությունը մի որվա համար չի... Վոր մեկ ել գնամ, քեզ ել եմ տանելու: Ա՛յ, կտեսնես...

5

Մյուս որը Գարանը տնից դուրս յեկավ մութը-մութին վոր Ովեսը չիմանա: Տանը բո որը քնած եյին: Ովեսն եդ որը մենակ հնձի գնաց: Նա կարծում եր, թե Գարանն արտում կլինի, բայց նա չկար:

— Յարաբ, ես փուչն ուր ա գնացել,—ասաց Ովեսը և եշը քշեց արտի կողքով, թե ով ա իմանում, մի տեղ քնած կլինի: Դես Գարան, դեն Գարան, Գարանը չկար ու չկար:

— Վոր եսենց ա, գնամ ման գամ—գտնեմ...

Յեզ Ովեսը եշը քշեց դեպի ճամբան: Նա չգիտեր ել, թե վոր կողմի վրա պիտի գնա և եշի վրա նստած քնով անցավ: Շոգից նա ա,նպես եր թուլացել, վոր մի քանի անգամ քիչ մնաց եշից ընկներ: Եշն արա-

ծելով գնաց-գնաց և հասավ մի կալի, փորտեղ գարի կար փռած: Փոշտացնելով եղբ սկսեց գարին խրթխրթացնել, իսկ Ովեսը քնել եր խորը քնով: Հանկարծ նա աչքերը բաց արեց և ինչ տեսավ... Մեկը փայտով խփում եր եղի դնչին և իր ուսերին:

— Տո՛ւ, հայվան, աչքերդ ուր ա... թյո՛ւ, յես քու մարդ ասողին...

— Դայի, ներես, քուես տարավ,—ասաց Ովեսը և եղի աղանջները ձեծելով, շուռ յեկավ դեպի այգիների ճամբան:

— Թու՛թը հիմա ծլում ա, հասն... մի գլուխ կրկնում եր նա և շտապում, փոր շուտ հասնի:

Բաղերը հասնելուն պես Ովեսը թափ տվեց մի թթի ծառ և կանաչ խոտերի մեջ չորեթաթ տալով, կուշտ կերավ: Որը լավ որ եր: Ովեսը մոռացել եր



արտն ել, Գարանին ել և յերեսն առվում լվանալուց հետո, հենց են ե ուզում եր պառկի քնի, մեկ ել տեսավ, փոր իրենից քիչ հեռու խոտերը շարժվում են:

— Աման, բաղատերը չլինի,—վախեցավ Ովեսը և ուզում եր հեռանալ, մեկ ել տեսավ, փոր Գարանի փափախն ընկած ե ենտեղ:

Ովեսն եղտեղ ազատ շունչ քաշեց և սիրտ առած ավելի մոտեցավ: Խոտերի մեջ պառկածը Գարանն եր: Նա ամբողջ ուժով գոռաց.

— Ա՛յ փուչ անասուն, արտը թողած յեկել, եստեղ վեր ես ընկե՛լ...

— Իսկ դու առանց ինձ մաճառ կխմե՞ս... Հընձիր, ելի, իմ ուտողն ու՛լ ա...

Քիչ մնաց, փոր ելի կովեյին: Վախենալով, փոր այգետերը դուրս կգա, կքոթակի, նրանք այգուց դուրս յեկան: Քանի գնում ենքան բարձրանում եր նրանց ձենը: Իսկ յերբ ձորի սառը գետը Գարանի աչքովն ընկավ, ուրախությունից կանչեց.

— Ովես, յողանանք:

— Հալբաթ...

Շորերը հանելը և գետում չրմփալը մեկ յեղավ:

Յերբ նրանք իրիկունը տուն գնացին, մայրը տան շեմքին կանգնած անիծում եր տղաներին թուր տալիս: Ովեսն ու Գարանը նայում եյին իրար և համարյա միաժամանակ խոսելով սիրտ եյին տալիս իրենց ել, մորն ել.

— Ա՛ մեր, հրես սարի պես կանգնած ենք, հո սովամահ չե՞նք լինելու...

Եղպես ել նրանք արտը չհնձեցին: Ով հնձեց նա ել տարավ: Թոշուններն ել մի կողմից: Իսկ յերբ ձմեռը յեկավ, ել վոչ բաղերում թու՛թ կար, վոչ տանը հաց: Դե վորտեղից լիներ:

Գարանին եղ տարի թագավորը զինվոր տարավ, իսկ Ովեսը կանգնեց թե՛

— Գնում եմ նավթի բուրուղներում փող աշխատեմ...

Շատ ժամանակ անցավ լուր չկար Ովեսից ու Գարանից: Ուր գնացին, վորտեղ մնացին— հայտնի չեր: Իսկ գյուղում նրանց չեյին մոռացել: Կովում, թե հանաքի մեջ, սիշտ նրանց եյին հիշում:

— Դե, դե Ովեսը չգառար գլխիս...

— Իսկ դու Գարանն ես, վոր կաս...

## ՄԻՐԱՔԸ

1

Գյուղում լուր եր տարածվել, թե Միրաքը վախկոտ ե: Ձմեռն ողաներում եյին պատմում այդ մասին, ամառը՝ դաշտում: Յեվ ամեն մեկն իր տեսածի ու լսածի վրա մի բան ել ավելացնում եր:

Մանավանդ գյուղի յերեխաները Միրաքին հանգիստ չեյին տալիս: Հենց վոր Միրաքն ելը



ջրելու յեր տանում կամ դուրս գալիս գյուղամեջ, յերեխաները կտուրներն եյին բարձրանում և հա-



զար ու մի ծաղրական բացականչութիւններ ա-  
նում.

— Միրաք, փախի, սատանաները յեկան...

— Միրաք, ցերեկն ել ես վախենում, թե՞ մե-  
նակ գիշերը...

Յերեսխաների հետևից քարեր նետելով Միրաքը  
հերստտում էր, վազում, վոր մեկն ու մեկին բռնի,  
բայց չէր հաջողվում:

— Այ թե մի ձեռս կրնկնեք... Յես ձեզ ցույց  
կտամ, թե Միրաքն ով է...

Յեզ նա ձեռքն ողում թափահարելով վերա-  
դառնում էր տուն:

Բափական էր, վոր եշր գունչը մեկներ ճանա-  
պարհի յեգրերին բուսած կանաչներին: Ել պրծավ  
Միրաքը հերստտած սկսում էր ծեծել իշուն, ասեա:  
իր վրեժը խեղճ անասունից էր ուզում առնել:

Յերեսխաները ծաղրում էին նաև Միրաքի  
տղային: Նրա անունը Սերոբ էր: Կայտառ ու խա-  
ղասեր յերեսխա յեր Սերոբը: Բայց պատահում էր,  
վոր նա սրերով փակվում էր տանը և դուրս չէր  
գալիս ընկերների հետ խաղալու:

— Սերոբ ջան, ասում էր մայրը տղայի մագե-  
րը շոյելով, — Ի՞նչ է պատահել քեզ հետ, վոր տա-  
նից դուրս չես գալիս... Գնա լողացիք գետում,  
խաղա: Դրսում այնպես լավ է...

— Ե, չեմ... Ծիծաղում են ինձ վրա... համա-  
ռում էր Սերոբը և նայում մոր աչքերին: Հետո  
նա յերկար կանգնում էր պատուհանի առաջ, նա-  
յում՝ թե ինչպես իր ընկերները ուրախ ու զվարթ  
խաղում են դրսում: Սերոբն այլևիս համբերել չէր  
կարողանում և դուրս էր գալիս փողոց: Դեռ ընկեր-

ներին չմոտեցած, հեռից լսում էր նրանց բացա-  
կանչութիւնները.

— Հրեն, հա, նայեք, փախկոտ Միրաքի տղան  
է գալիս...

Սերոբը շատ էր վրդովում, յերբ լսում էր հոր



մասին այդպիսի վիրավորական խոսքեր: Տուն վե-  
րադառնալով, նա գլուխը կախ պատմում էր մորը:  
Միրաքի կինը բարկանում էր մարդու վրա, իսկ  
Միրաքը ուշադրութիւն չգարձնելով հերստտած  
կնոջ խոսքերին, ծիծաղում էր հանգիստ ու անվրդով:  
Անհոգ փովելով թախտին, նա անվերջ գովում էր  
իրեն, մինչև վոր կինը ցախավելը ձեռքին մոտե-  
նում էր նրան, սպառնալով.

— Տո՛ւ, գլուխդ հողեմ, — ասում էր նա, — դու  
ինձ համար մարդ չես, այլ պատուհաս: Քո պատ-

ճառով ամաչում ենք տնից դուրս գալ: Գյուղում մեծ ու փոքր քո սասին են խոսում — վախկոտ մոզի...

— Եղ նախանձից ե, Սառա, չար նախանձից, — պատասխանում եր Միրաքը և վերջումն ել ավելացնում, — ինձ նման անվախ մարդ, յես իմ արևը, ես գյուղում մեկ ուրիշը չկա...

Յե՛վ Միրաքը դարձյալ սկսում եր պատմել իր քաջագործություններից... Յերբեմն նա այնպես եր հափշտակվում պատմելիս, վոր ինքն ել եր հավատում իր ասած ստերին:

2

Մի քանի հոգով վորոշեցինք անտառը փայտի գնալիս Միրաքին ել հետներս տանենք:

— Միրաքն անտառ չի գնա, — ասաց մեկը:

— Արևը մայր մտնելուց հետո նա տանից դուրս չի գալիս, — վրա բերեց մյուսը:

— Յես կհամոզեմ, — ավելացրի յես և յերկրորդ որը Միրաքին հայտնեցի անտառ գնալու մասին: Նա ծոծրակը քորելով մի քիչ մտածեց և վերջը համաձայնվեց:

Ամառը վերջանալու վրա յեր: Կալերը կալսել պրծել ելինք: Գիշերը, աքլորների առաջին կանչին, Միրաքի դուռը ծեծեցի:

— Վեր կաց, Միրաք, գնում ենք...

Լուսնի ծերը հենց նոր եր դուրս յեկել լեռան հետևից: Միրաքը տեղից վեր կացավ, նստեց, հորանջեց և նորից պառկեց:

— Յրկար ճանապարհ պիտի կտրենք, Միրաք, շուտ արա:

Միրաքը նայեց դես ու դեն և սկսեց շորերը փնտրել: Նա մեկ ինձ եր նայում, մեկ կնոջը, վորն իմ ձենից զարթնել եր և խեթ նայելով Միրաքին, թաշկինակի մեջ հաց եր կապում նրա համար: Տեսնում եյի, վոր Միրաքը մի բան ե ուզում ասել, բայց քաշվում ե, թե ինձնից և թե կնոջից: Յերբ նա դուրս յեկավ բակը եշի փալանը դնելու, մոտեցավ ինձ և ականջիս կամաց շշջաց.

— Հարեման, արի կլինի սպասենք, մինչև լուսը բացվելը...

— Ի՞նչու...

— Ասում են Սատանի ձորում դաչաղներ են յերևացել:

Հենց եղ ըոպեյին Սառան թաշկինակի մեջ փաթաթած հացը հանձնեց Միրաքին: Միրաքն առանց ձեն-ձուն հանելու, եշն առաջ արավ և մենք ճանապարհ ընկանք:

— Ես լավ յեղավ, — մտածում եյի ինքս ինձ, — հիմա յես կիմանամ, թե Միրաքը ինչ տղամարդ ե:

Հազիվ մի յերկու վերստ հեռացած լինեյինք գյուղից: Պարզ, աստղազարդ գիշեր եր: Սատանի ձորին հասած-չհասած՝ լուսինը թագնվեց մի մեծ կտոր ամպի հետևում, վոր նման եր նստած ուղտի: Միրաքը, վոր մինչ այդ խոսում եր դեսից-դենից, իսկույն լուեց: Գնում եյինք մենք ծառերի միջով և մթության մեջ հազիվ նկատվող ամեն մի ծառ կամ թուփ, նման եր դարան մտած մարդու:

— Միրաք, եղ ինչո՞ւ լուեցիր: Գիչ առաջ ինձ հերթ չեյիր տալիս խոսելու, — ասացի յես և իմ խոսքի վրա մեկ ել հոպ, թռչունը դուրս թռավ

Թփերի միջից: Միրաքը եղից թուով և ենպես բղավեց, ասեցի խեղճի լեղին ճարեց...

— Այ տղա Միրաք, քեզ ի՞նչ պատահեց:

— Բա քու տունը չքանգվի... Ախր ասում եյի, մարդ ես ժամին տանից չպիտի դուրս գա:



Յե՛վ Միրաքը լեղապատառ, եղին բզեւով մոտեցավ ինձ:

— Հո աչքովդ բան-ման չընկավ, — նորից հարցրի յես, ծիծաղս հագիվ գսպելով:

— Բա չընկամ... Հարևան, յես իմ արևը, մի մեծ, աժդահա մարդ, հրացանը ձեռին դուրս պրծավ Թփերի միջից: Ախր յես ասում եյի...

Յե՛վ Միրաքն սկսեց շշուկով պատմել, թե ինչպես հենց այս ձորում անցյալ տարի մի մարդ են սպանել և մի քանիսին ել թալանել...

Չորն անցանք թե չե, լուսինը դուրս յեկավ ամպերի յետևից: Միրաքը նորից եր սրտապնդվել և վողբվորված պատմում եր իր մասին:

— Քանի-քանի անգամ եմ գիշերն անտառում

մնացել... Գլխովս ենքան բաներ են անցել, — ծոր տալով վերջադրեց Միրաքը:

Լույսը բացվեց: Հեռվում սևին եր տալիս անտառը: Սպիտակ ամպի մի քանի կտորներ լողում եյին առավոտվա մշուշում: Միրաքը ննջում եր եղի վրա նստած և յես յեկա այն մտքին, վոր նա կամ պետք ե խոսի, կամ քնի:

— Միրաք, մի քնի, իշից կընկնես:

Միրաքն աչքերը բաց արեց, թե չե՛ գլխարկն ուղղելով ասաց.

— Յես մի անգամ քարով արջ սպանեցի, հարևան:

— Եդ յերբ եր, — դարձա դեպի Միրաքը ծիծաղրս հագիվ գսպելով և ամեն կերպ աշխատում եյի լուրջ ձևանալ:

— Հինգ տարի սրանից առաջ, — այսպես սկսեց Միրաքը. — մեր ջրախառնուտի գլխին մորի եյի քաղում: Տեղս շատ բարձր եր: Նայեցի ժայռի գլխից դեպի ձորը, աչքերս մթնեց: Մեկ ել նայեցի և տեսնեմ... Ի՞նչ տեսնեմ, հարևան... Չորում արջն աղբյուրի վրա կուացած ջուր ե խմում և դուռնչը բարձրացնելով ողբ հոտոտում: Մտքովս անցավ, վոր արջը մարդու հոտ ե առել: Բայց դե գիտես յես վախկոտներից չեմ... Անիծեցի բախտս, վոր վորսի հրացանը տանն եյի թողել... Կողքիս ընկած մի մեծ քար կար: Քարը գլորեմ, ասացի, գուցե իմ բախտից կզիպչի: Վտոքերս դեմ տվի քարին, գլորեցի: Չորում բարձրացած փոշու միջից լավեց, գազանի խուպոտ վռոնոցը: Յերբ փոշին նստեց, ժայռի գլխից շունչս պահած նայեցի ցած: Տեսնե-

յու բան եր, հարևան... Իմ գլորած քարը կոտրել եր  
աղբյուրի կողքի մեծ ուռենին և արջը մնացել եր  
ծառի տակ...

Արջի կաշին մաշկեցի, ձմեռը քուրք կարեցի,  
իսկ ճարպը մի ամբողջ տարի բանեցրինք...

3

Անտառը հասնելուն պես սկսեցինք փայտ կրտ-  
րել: Հեռվից, շատ հեռվից մեզ եր հասնում աղվեսի  
հաչոցը:

— Աղվես ե, Միրաք, տեսնես փորտեղ ա:

— Մի անգամ յես մի գնդակով յերկու աղվես  
սպանեցի,— իսկույն վրա բերեց Միրաքը առանց  
յերկար ու բարակ մտածելու:

Չուր խմելու պատրվակով յես գնացի դեպի  
անտառի խորքը: Վորոշել եյի, վոր Միրաքին պիտի  
վախեցնեմ տեղն ու տեղը փորձելու համար: Առանց  
ժամանակ կորցնելու նրա եջը տարա, կապեցի թա-  
վուտի քարանձավում, չուխես գցեցի գլխին: Քա-  
րանձավից դուրս գալիս նայեցի հետ, խեղճ կեն-  
դանին չուխայի տակից ականջները ցցել և պսպղուն  
աչքերով ինձ եր նայում:

Յես դարսեցի կտրած փայտը և քայլերս ուղղե-  
ցի դեպի Միրաքի կողմը, վորը տանձի ծառի տակ  
նստած ինձ եր սպասում: Նստեցինք, հաց կերանք  
և դեռ չեյինք վերջացրել, վոր յես շտապեցրի Մի-  
րաքին.

— Շուտ արա, եշերը բեռնելու ժամանակն ե:

— Թող քիչ ել արածեն, հարևան, իսկ մենք  
կքնենք, դեռ շուտ ե:

— Իսկ դու գիտես, Միրաք, արևը մայր մտավ  
թե չե, մուկը կընկնի,— ասացի յես և նայեցի նրա  
աչքերին:

Ասելս ու Միրաքի տեղից թռչելը մեկ յեղավ:  
Նա փորձում եր ինձսից ծածկել իր յերկյուղը,  
բայց չեր հաջողվում: Չեռսին բռնած հացի պա-  
տառը չկերավ և տեղում անշարժ կանգնած մնաց:

— Միրաք,— ասացի, դու գնա դեպի քարան-  
ձավի կողմը. քո եջը քիչ առաջ յես այնտեղ եմ  
տեսել:

Յերբ Միրաքը մի քանի քայլ հեռացավ, յես  
կանգնել, նայում եյի նրա հետևից: Նա դես ու դեն  
եր նայում և այնքան դանդաղ եր շարժվում, վոր  
միսչև մուկն ընկնելը քարանձավին չեր հասնի:  
Հետո ճանապարհի կիսից. թե ինչ մտածեց չգիտեմ,  
հետ վերադարձավ:

— Ինչո՞ւ հետ յեկար,— ասում եմ:

— Յես մենակ անտառի խորքը չեմ գնա...

— Այ տղա, ինչո՞ւ:

— Անցյալ տարվա գարունքին ենտեղ մի մեծ  
գայլ եմ տեսել:

Շատ խոսեցի, սիրտ տվի, բայց կարծում  
եք հեշտ եր Միրաքին համոզելը:

— Չե, վոր չե,— համառեց նա ու կանգնեց:

Ել ճար չկար և մենք յերկուսով գնացինք:  
Յե՞րբ մոտեցել եյինք քարանձավին, Միրաքն իմ  
ներկայութունից սրտապնդվելով ներս նայեց և  
խավարում եշի փայլող աչքերը տեսնելով, հետ  
վազեց.

— Հր,— ասում եմ,— գուցե բան ես տեսել:

— Հարևան, յես իմ արևը, գայլը քարանձա-  
վումն ե:

— Այ տղա, եջը կլինի, մտիր տես:


— Չե, վոր չե,— հեալով կրկնում եր Միրա-  
քը,— դա իսկական գայլ ե, անցյալ տարվա իմ  
տեսած գայլը...

— Ին՝ վոր եղպես ե, Միրաք, քանի՛ վոր գայլը մեզ չի տեսել, արի եստեղից շուտ հեռանանք: Յես գնացի, գլխիդ ճարը տես...

Հենց ես խոսքերի վրա քայլերս փոխեցի թե չե, Միրաքն այնպիսի աղաղակ քարձրացրեց, ասես անտառը տեղահան յեղավ:

— Վայ, հարևան, ինձ մենակ մի թողնիր:

Յես հեռվից ծիծաղում եյի Միրաքին նայելով, իսկ նա լաց եր լինում յերեսայի ատ: Տեսա, վոր



բանը-բանից անցել ե, ինքս մտա քարանձավը: Ե՛րբ դարձյալ կանգնած եր նույն տեղում և չուխայի տակից փայլում եյին աչքերը: Ե՛րին դուրս քշե-

ցի, իսկ Միրաքը հեռվում կանգնած աչքերը սրբում եր:

— Հարևան, եղ քու արածը կ'ի՛ի, յես իմ արեվը, — ուրախացած մոտեցավ նա և սկսեց խրատներ կարդալ իշի գլխին:

Մենք ճանապարհ ընկանք դեպի տուն: Յերբ արդեն բավական հեռացել եյինք անտառից, Միրաքի շատախոսությունից ազատվելու համար, դիմեցի նրան.

— Ես քեզ խրատ և դու լինես դու, մեկ ել գլուխդ չգովես ինձ մտա:

Միրաքը ժպտաց ու լռեց, Բայց արի ու տես, վոր նրա լուսթյունը շատ կարճ տևեց: Շուտով նա մոռացավ ճանապարհի դեպքը, քարանձավն ու ե՛րի պատմությունը և բեխերը վոլորելով, սկսեց իր յերևակայության մեջ հնարած անթիվ պատմություններից մեկը.

— Աշնանը մի գիշեր մնացի անտառում: Լուսնյակ գիշեր եր: Մուշ-մուշ քնել եյի մեծ կաղնու տակ, ե՛րբ բաց թողել խոտերի մեջ: Յերագիս տեսա, վոր մեկը դաշույնը ձեռքիս, փոտքի թաթերի վրա, կամաց մոտենում ե ինձ... Յես տեղիցս վեր թռա, աչքերս տրորեցի և են ե, ուզում եյի մյուս կողմի վրա շուտ գալ, մեկ ել հանկարծ աչքովս ընկավ մի կենդանու ստվեր: Յեղջերու յեր, հարևան, մի սիրուն յեղջերու, փորն ինձնից շատ մոտիկ, լուսնի շողերի տակ դնչով փորփրում եր դեղին տերևները: Կողքիս ընկած պարանի ծայրը ող արի, բայց կենդանին տեսավ ինձ և ականջները սրելով կանգնեց: Եղպես նայեցինք իրար, հարևան: Յես իրան, ինքն ինձ: Յես մի ակնթարթում պարանն ենպես շարտեցի, վոր ողը փաթաթվեց կենդանու յեղջուրներին

և քաշելով տապալեցի գետին: Իսկապես հանեցի,  
վոր մորթեմ, բայց... ախոսացի ու բաց թողի:  
Ենպես եր բառաչում, հարևան, վոր մինչև հիմի  
ել ձենն ականջիցս չի գնում...

## ՎՈՐՍԿԱՆ ԱՆՏՈՆԸ

1

Վորսկան Անտոնի տունը թաղի յերեսաների  
սիրած հավաքատեղին եր: Մութն ընկնելուն պես  
իրար ձեն տալով, յերեսաները հավաքվում էին  
Անտոնի տունը և թեժ բուխարու առաջ տեղ գրա-  
վելով՝ սպասում: Բուխարու առաջ ծալապատիկ



Ստ. Ա. Թ. Գ. Ե. Զ.

նստած՝ ձերունի վորսորդը պատմում եր իր վոր-  
սորդական արկածներից, հեքյաթներ եր պատմում  
մեկը-մյուսից հետաքրքիր և շատ անգամ ել հենց  
ինքն եր հնարում պատմելիս:

Չնայած Անտոնի ութսուն տարին վաղուց եր  
լրացել, սակայն նա չեր կորցրել իր կայտառությու-

նր, սուր հիշողութիւնն ունենալ և սիրում եր կատակներ ասել: Յերեսխաները լսում ելին Անտոնին ուշադրութեամբ և ամեն ինչից յերևում եր, վոր բաշի հարգանքից, մի առանձին մտերմութիւն եր. հաստատվել նրանց ու ծերունի գորսկանի միջև:

Հենց վոր Անտոնը ծխամորճը գրպանից հաներ, յերեսխաներն — իսկույն կսկսեին.

— Պապի դե, արջերի մասին ել պատմիր, ելի...

— Չե՛ չե՛, ավագակների մասին...

— Հեքլաթ պատմիր, պպպի, հեքլաթ...

— Վոր համբերե՞ք՝ ամեն բանի մասին ել հերթով կպատմեմ, — մեղմ պատասխանում եր Անտոնը և սկսում:

Յերբեմն պատմութիւնը կիսատ թողնելով Անտոնը խաբս եր տալիս յերեսխաներին, նրանց հետաքրքրութիւնը շարժում: Նայում եր նա աչքի տակով թե արդյոք փոչ փոք չի՞ քնել և ժպտում եր մեղմ ու դուրեկան ժպիտով:


Հենց պատմութիւնն ընդհատվում եր թե չե, յերեսխաները խառնվում ելին իրար, ավելի սեղմվում Անտոնի շուրճը իսկ ամենից փոքրերը քաջում ելին նրա բամբակի պես սպիտակ մորուքից ու ծնոտի տակը խուտուտ տալիս:

— Խափլան, բա ինչի՞ կիսատ թողեցիր, — դժգոհում եր մեկը:

— Պապի, արջը ջաղացում պիտի մնամ, — ավելացնում եր մեկ ուրիշը՝ ծերունուն հիշեցնելով, վոր այդտեղ ե կանգ առել:

— Արջը գնում ե, գնում, — շարունակում եր Անտոնը, — և մտնում ե ջաղացը: Ջաղացպանը, վոր արջին տեսնում ե, տապ ե անում վախից և շունչը փորը գցում: Մոտենում ե արջը, հոտոտում, բայց

ջաղացպանը տեղից ժաժ չի գալիս, իբր թե բերանումը շունչ չկու, մեռած ե... Իուրս ե գալիս արջը, վոր քարը բերի ջաղացպանի վրա գցի, սոված ժամանակ գա ուտի... Մի մեծ քար խտտած, արջը, վոր մտնում ե ջաղացը, տեսնում ե ջաղացպանը



չկա, տեղից վեր ե կացել ու փախել: Բարկանում ե ծուռտիկը, փրփրում, թրոտում, ալրատան ալյուրը շաղ տալիս և ինչքան դես ու դեն ե ընկնում, ջաղացպանին ել չի գտնում: Չկա ու չկա...

Հետո ալյուրոտ դունչը տմբտմբացսելով կանգնում ե ջաղացի մեջտեղը, հերսոտում, իբր թե՛ ես ինչ հիմար բան արի, վոր ջաղացպանին բաց թողի...

Անտոնը նորից ե լռում: Յերեսխաները, վոր անհամբեր սպասում ելին, թե վերսն ինչ պիտի լինի արջի հետ, իրար յերեսի յեն նայում: Մեկն անկյունից բարկացած հարցնում ե.

— Իա արջը ջաղացում կանգնած պիտի մնամ...

— Դե ինչի յե կանգնած մնում, — շարունակում

ե Անտոնը, ժպտալով, — արջը սուսիկ փուսիկ նրս-  
տում ե ալրատան առաջն ու յերկար սպասում,  
թե՛ ով ա իմանում, շաղացպանը կարող ե ելի գա,  
բայց նա չի գալիս... Եհ, դե փոր չի գալիս, ինքն  
ել թոնթորալով գնում ե մի ուրիշ շաղաց...

2

Կամաց-կամաց լսողների թիվը շատանում ե:  
Կրակին ավելացրած չոր փայտը վառվում ե՝ խրճի-  
թում տարածելով հաճելի ջերմություն:

Անտոնը սպիտակ միրուքը շոյելով, դանդաղ,  
ասես ամեն մի բառի համար մտածելով, սկսում ե  
մի նոր բան պատմել.

— Հացը թանկ մի տարի, քյարվան կապեցինք  
ու ճանապարհ ընկանք դեպի Վարաբաղի կողմերը:  
Ենքան ել շատ ելինք: Հիսուն տղամարդ, հիսուն կին,  
հիսուն յերեխա, հիսուն շորի, — բոլորս հիսուն-հի-  
սուն: Կնացինք մի որ, յերկու որ. շատ գնացինք:  
Ճամբեն վերջ չունեք: Դե փորձանքն ել հո կար ու  
կար... Կանայք ու յերեխաները նստել ելին բեռնած  
շորիները, իսկ տղամարդիկ վոտքով ելին գնում:  
Աշուն եր: Ծառերն ու խոտերը դեղնել ելին: Գը-  
նում ելինք և վորտեղ մթնում եր, ենտեղ ել կրակ  
ելինք անում, գիշերը մնում և լուսը բացվելուն  
պես՝ ճամբեն շարունակում: Շատ գնացինք թե  
քիչ, եղ շատ յերկար ե, չեմ ասի, բայց ենպես  
ելինք բեզարել, ել ասել չի լինի... Յերեխաները  
լաց ելին լինում, հալից ընկած շորիները ականջ-  
ները կախ ելին գցել, կանայք մնացել ելին շիվար:  
Ճամբեն գնում եր անտառի միջով — կեռ ու  
մեռ: Մեր գեմը մի սար եր յերևում, բարձր սար,

փափախի պես ամպը գլխին: Ենքան մոտիկ եր  
թվում սարը, ասես հրեն, հա, ձեռքդ մեկնես՝ կհաս-  
նի: Արի ու տես, գնում ենք, գնում՝ սարին չենք  
հասնում: Մեկ ել են տեսնենք՝ են սարից թանձր  
մառախուղ իջավ ու ճամբեն կալավ: Միտեց, են-  
պես մթնեց, ել իրար շտեսանք: Չորիների պոչից  
բոնած, ընկել ելինք եղ լեն ու բոլ ճամբեն, ասես  
կույրեր լինեյինք: Անձրեն ել մի կողմից յեկավ  
մեզ թրջեց: Մեկ ասացի՝ արի կլինի բեռներն իջեց-  
նենք, հանգստանանք. մեկ ել, թե՛ ես յաբանի չո-  
լում մնալ չի լինի, քարը գլուխը, քիչ ել գնանք,  
մինչև հարմար տեղ գտնենք:

Ելի գնացինք, — շարունակեց Անտոնը և հազաց:  
Շատ գնացինք, թե քիչ՝ չեմ ասի, բայց են, ինչ  
մենք տեսանք մեր աչքով, լավ ե, վոր դուք չեք  
տեսել... Վոր պատմեմ, վոչ ականջ կդիմանա, վոչ ել  
ասելու բան ա...

Անտոնը նայեց դես ու դեն, հարսից ջուր ու-  
գեց և ջրով լիքը ամանը գլխին քաշեց:

— Դե պատմիր, ե, պապի, բոլ ա ինչքան խմե-  
ցիր. — անհամբեր ասաց յերեխաներից մեկը:

Յերեխաները նորից խառնվեցին իրար և աղ-  
մուկ բարձրացավ: Անտոնը քթի տակ ժպտալով  
վորտեց թրջված բեխերը և շարունակեց.

— Մեկ ել մեր բախտից, ճամբի մի կողմի վրա  
տեսա մի մեռե՛ծ, սև ժայռ... Ենքան մեծ եր եղ  
ժայռը, ենքան մեծ, ել ասել չի լինի: Ես հո լավ  
յեղավ, — ասացի յես և ուրախացած ձեն տվի: Յե-  
կան բոլորը: Փայռի տակ շորիների բեռներն իջեց-  
րինք: Տեղավորվեցինք հիսուն մարդ, հիսուն կին,  
հիսուն յերեխա, հիսուն շորի, — բոլորս հիսուն-  
հիսուն և դեռ ազատ տեղ ել մնաց: Փայտ բերինք

անտառից, ու կրակ արինք: Անձրևն ել ենպես եր  
գալիս, ասես հրես հա աշխարհի վերջն ե հասել:  
Տաքացանք, թրջված շորներս չորացրինք: Յեղածից  
կերանք, չեղածից կերանք և կրակի շուրջը քնե-  
ցինք:

Ամենից շուտ յերեխաները քնեցին: Նրանք են-  
պես եյին բեզարել, ասել չի լինի... Իսկ իմ քուռը  
չեր տանում: Յես լսում եյի քնածների թառանչն  
ու խոսվոցը: Գիշերվա խավարում, հեռվից, շատ  
հեռվից իմ ականջին եր հասնում գելի փոռնոցը:  
Գետը վշտում եր մի տեղ: Չորիները խրթխրթաց-  
նում եյին չոր խոտի և դարմանի մնացորդները:

Դե իմ աչքերն ել փակվեցին և ել չիմացա  
ինչ յեղավ...

Շատ քնեցի, թե քիչ՝ չեմ ասի, բայց բոլորից  
շուտ ելի յես գարթնեցի: Արդեն լուսացել եր: Արևը  
հենց նոր եր դուրս գալիս անտառի գլխից: Մառից  
ծառ թռչելով ծլվում եյին թռչունները: Հովիվը  
սրնգի նվագի տակ, լեռան նեղ կածանով անց եր  
կացնում վոչխարի հոտը: Սիրտս թեթևացավ: Դեհ,  
ասեցի, իզուր չեն ասել, թե նեղ որին լեն որ ել  
կլինի... Եղ որը հենց ես ե, վոր կա...

Մեկ ել, ասեցի, տեսնեմ ես ինչ ժայռ ե, վոր  
եսքան մարդն ու անասունը պաշտպանեց անձրե-  
վից, հազար ու մի փորձանքից: Գլուխս բարձրաց-  
րի, նայեցի եղ հսկա, սև ժայռին... Նայեցի,  
նայեցի, հավատալս չեր գալիս: Շատ նայեցի, թե  
քիչ՝ չեմ ասի, բայց տեսա, վոր ժայռը շարժվում  
ե, վոնց ե շարժվում...

Քնածներին ձեն տվի:

— Արա, Իանել, Պետի, Մովսես, Գրիգոր, Մար-

գիս, Կարո, տո ձեր տունը շինվի, բոլ ա մրավեք,  
մի վեր կացեք, տեսեք, ես ինչ հրաշք ե...

Իսկ ժայռը շարժվում ե, հա շարժվում... Այ  
քեզ հրաշք...

Չենիս վրա քնածները գարթնեցին: Յես նրանց  
ցույց տվի ժայռը: Նրանք նայեցին մեկ ինձ, մեկ  
ժայռին, մեկ ինձ, մեկ ժայռին ու զարմանքից  
ուռները շարժեցին... Խեղճ մարդկանց լեզուն կապ  
եր ընկել:

Իու մի ասի, եղ մեր տեսածը ժայռ չեր, ալ  
մի մեհեժ հասած թուզ...

— Վայ, եղբան ել մեժ թուզ կլինի՞, պապի...

— Սափրան, ելի սուտ ասեցիր, — ասաց Անտո-  
նի մոտ նստած մի փոքրիկ տղա և թուավ նրա  
ուսերին:

Բոլորը միանգամից ծիծաղեցին:

— Իե, թե չեք հավատում, — շարունակեց Ան-  
տոնը, — ետ ել ձեր բանն ա: Կացինները քաշեցինք,  
թուզի մի կողից կտրտեցինք, բարձեցինք շորիներին,  
մենք ել կերանք կշտացանք — հիսուն մարդ, հիսուն  
կին, հիսուն յերեխա — բոլորս հիսուն-հիսուն և ճամ-  
բեն շարունակեցինք զեպի Ղարաբաղի կողմերը...

Գառ. խմբագիրը՝ Հ. Մելիքյան  
Լեզվական խմբագիրը՝ Հ. Հարությունյան  
Տեխ. խմբագիրը՝ Ստ. Ալթունյան  
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլխավորի լիազոր՝ Վ. 2015 Հրատ. № 4108

Գառվեր 168. Տիրամ 4000

Քուղի 62×94 Տպագր. 1¼ մամ

Մեկ մամ. 24480 նշան

Հանձնված է արտադրության 14 հունիսի, 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 25 հունիսի, 1938 թ.

Գետհրատի I տպա. ան, Յերեկյան, Լենինի 65



198

11808

ԳՐԱԸ 95 Կ.

Ա. ՇԱԷՆ  
ՏՐԻ ՐԱՏՏԿԱԶԱ  
ԳԻՅ ԱՐՄ ՍՏՐ ԵՐԵՎԱՆ